203.1
S-3-6

2
Ih.

N 100

2004 - ur

11574

2004

3974

203.1
S-36

# ՑՈՒՑԱԿ

Աշխատամատոյց վասն ջերմե-
ռանդ աշխատակցաց, որք
կամ անձամբ և կամ
մտօք ներկայանան՝
՚ի ս՜բ տնօրինական
Տեղիսն Ք՜րի
ա՜յ մերոյ:

Տպագրեալ ՚ի ս՜բ Եր՜մ

՚Ի Թւին փրկչին 1833 յունվ՛ի:

՚Ի Տպարանի Առաքելական
Աթոռոյս ս՜րց Յա-
կովբեանց:

7587-15

Արի՛ Տէ՛ր, և մի՛ զօրասցի քան
զքեզ՝ աճ հողեղինիս։
Մի՛ կշռեսցին ողորմութիւնք քո
ընդ ջանից մարդկան։

Նարեկ" ԺԹ. ԴԵ

Որդի՛ այ Թագաւոր բարձրեալ՝ որ
խոնարհեցար ՚ի հայրական ծոցոյ. և
եկեր յարգանդ ամենամաքուր սրբ կուսին
մարիամու. և ծնար ՚ի նմանէ՝ ամծդ բոլորից
մարդ կատարեալ ՚ի բեթլեհէմ ՚ի սբ այս
օրին, զի նորոգեսցես զհնութի նախաս-
տեղծ մարդոյն, վայյ երկրպագելով սուրբ
տեղւոյդ ծննդեան՝ փառաւորեմ զանճա-
ռելի խոնարհութիւնդ ընդ հրեշտակաց.
օրհնեմ զանքննելի տնօրէնութիւնդ ընդ
հովուաց. բարեբանեմ զանչափ մարդասի-
րութիւնդ ընդ մոգուցն. և աղաչեմ զքեզ
փրկիչ իմ Յս՛ ընկալ զերկրպագութիս իմ
՚ի հաճոյս քոյ, որպէս ընկալար ՚ի հովուացն
և ՚ի մոգուցն. և շնորհեա զքաւութիւն
յանցանաց իմոց՝ բարեխօսութեամբ մօր
քո և կուսի և ամ սրբոց. և արժանա-
ւորեա զիս ՚ի միւսանգամ գալստեանդ
փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սբ
Հոգւոյդ այժմ և միշտ
և յաւիտեանս
ամէն.

Ով էիր յառաջ քան զյաւիտեանս Բանդ Աստուած՝ փառաւորեալ ընդ Հօր և սբ. Հոգւոյն ՚ի դասուց հրանիւթիցն. և հանգչիս յաթոռս քրոբէականս. և գթացեալ ՚ի գործս ձեռաց քոց, խոնարհեցար ՚ի յերկնից վասն փրկութեան մերոյ. զի բարձրացուսցես զբնութիւնս մեր. իջևանեցար ՚ի մսուր անբանից, զի զհաւատարեալս և զնմանեալս նոցին՝ յառաջին փառս վերածիցես. խանձարրապատ պատեցար, զի զմեր կապանս մեղաց խզեալ պատառեսցես, որով և զհպարտացեալն ՚ի վերայ բաստեղծուածոց կործանեցեր. հաց անմահութեան պարգևեցար Յիսուս, զի զսովեալսն կերակրեսցես. վասն այսորիկ գոհաբանեմ զքոյութիդ՝ որ այց արարեր պատկերիդ կորուսելոյ. և հայցեմ ՚ի քէն փրկիչ իմ, ընկալ զերկրպագութիւն իմ բարեխօսութեամբ անարատ ծնողի քո սբ. Աստուածածնի և ամենայն սրբոց. և շնորհեա՛ զայցելութիւն հոգւոյ իմոյ ՚ի յօր երևման փառաց քոց, լսել զձայնդ հայրականն. և փառաւորել զամենասուրբ Երրորդութիւնն այժմ և միշտ և յաւիտեանս ամէն:

Եկեալ առաջի սբ. դրան երկնաւորիդ առա-
ծարի քոյ՝ երկրպագանել ամենօրհնութեան
սբ. տէրութեանդ և խնդրել զթողութիւն յան-
ցանաց իմոց, մի՛ մերժեր զիս յողորմութե-
քումմէ, զի գիտեմ սբ. արեամբդ, գթա՛ և
յիս՝ որ գթացար յաջակողմեան աւազակին,
և բացեր նմա զդուռն դրախտին կենաց,
բա՛ց և ինձ մեղաւորիս զդուռն ողորմութե-
քո՝ բարեխօսութբ. մօր քո և կուսի, զի
արժանի եղէց փառաւորել զքեզ՝ ընդ
Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ այժմ
և միշտ և յաւիտեանս Ամէն:

✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻

## Աղօթք առաջի սբ. բանաւորին քնի:

Ո՛վ Աստուածայնութիւն անշրջանելի՛ և լուսա-
իմանալի՛ կենդանի իմ յոյս. որ ընդունեցար
'ի սպասաւորելն գիշերին մեծի ուրբաթու,
և կապեցար նախատանօք՝ լուծի՛ր զկապե-
լոց. ոչ դարձուցեր զանսասանելին զերեսդ
'ի թքանելոյ՝ բարձրագոյն անիծից. գանեցար
ապտակօք 'ի Հրէից՝ փրկիչդ կորուսելոց.
ծաղրեցար 'ի զինուորաց՝ տէրդ Հրեշտա-
կաց. դատեցար 'ի Պիղատոսէ՝ արքայդ

 հրե-

բնղխնաց. մտեր 'ի բանդ՝ ստեղծողդ հա-
մայնից. անարգական մահու դատապար-
տեցար՝ կեանքդ աշխարհի, զի զպարտա-
ւորեալս մեղօք ազատեսցես: Վասն որոյ
աղաչեմ զքեզ՝ բարեխօսութեամբ մօր քո և
ամ սրբոց, հան զիս 'ի բանդէ մեղաց. լուր
ձայնի պաղատանաց իմոց. և յիշեա՛ զիս
յորժամ գայցես արքայութբ քով՝ զի դու
ես տր ամի. և քեզ փառք յաւիտեանս
յաւիտենից ամէն:

Աղօթք աւազակին փրկեալ պսակեալ ընդ տեղւոյն քրի.

Երկայնամիտ և բազումողորմ Տէր. որ
կարգեցեր գլուխ ամ կենդանեաց ըզ-
մարդն, զոր և պսակեցեր լուսեղէն փա-
ռօք: Իսկ 'ի սատուգանել նորա ամենայն
պատուիրանացդ՝ արտաքսեցեր 'ի փառա-
կենցաղ դրախտէն յերկիրս մահաբեր.
տալով նմա վճիռ բուսուցանել զփուշ
խոցոտիչ. այլ ամենախնամ Տէրդ՝ ոչ ան-
տես արարեր զպատկերդ տէրունական.
այլ եկեր 'ի խնդիր յերկիրս անիծաբեր.
և փոխանակ արքայական պսակին՝ 'ի սուրբ
գլուխ քո զփշեղէն պսակ ընկալար. զի



զա-

զանձանց առաջին յօրհնութեան փա-
խեացես. Արդ՝ աղաչեմ զքեզ Ք̃ս,
հան յինէն զփուշ մեղացն. և բժշկեա՛
զհոգի իմ 'ի խոցմանէ վիրացս, զի մի՛ դա-
տապարտեցայց ընդ չար մշակացն. բարե-
խօսութեամբ ս̃բ ա̃ծածնի և ա̃մ սրբոց
քոց արա՛ արժանի անվախճան կենացդ.
զի ը̃ն հրեշտակացն զօրհնութի̃ և զփառս
վերառաքեցից քեզ՝ և Հօր ամենակալի
և Հոգւոյդ սրբոյ ճշմարտի, այժմ
և միշտ և յաւիտեանս ամէն.

**************************

Աղօթք առաջի ս̃բ հանդերձի բաժանման
տեղւոյն ք̃հի.

Տէրդ բոլորից. ա՛ծդ ա̃մ արարածոց, որ
յոչընչէ ստեղծեր զերկինս և զերկիր, և
զոր 'ի նս̃. և զարդարեցեր զա̃մ գեղաշուք
վայելչութբ̃. և զառաջնաստեղծ մարդն
զգեցուցեր հրաշագեղ լուսով: Իսկ որ-
դիքն անօրինաց զտէրդ մերկացուցին. և
զհանդերձդ բաժանեալ 'ի միջի իւրեանց՝
'ի վր̃ անկար պատմուճանիդ վիճակ արկին:
Արդ՝ աղաչեմ զքեզ փրկիչդ աշխարհի՝
մերկեա՛ յինէն զքուրձ մեղաց. և զգեցո՛

հոգւոյս զլոյս փառաց․ զի մի՛ յանձնա-
շնորհացդ զրկեալ գտայց․ այլ գտանիցի ընդ-
մէջս քո ՚ի կենսանն անվախճանն, և քեզ
փառք յաւէտ այժմ և միշտ և յաւիտեանս
ամէն ։

Աղօթք առաջի տարածման որ տեղւոյն քնոյ

Օ քեզ տէր իմ օրհնեմ և փառաւո-
րեմ․ և զքեզն տէր գոհանամ, որ ոչ անտես
արարեր զգործս ձեռաց քոց․ այլ միշտ
հոգացար վասն մերոյ փրկութե․ իջեր ՚ի հօրէ
և մարմնացար ՚ի մէջ կուսին․ յանձն առեր
զչարչարանս․ բարձեր զխաչն (?) մահու ՚ի
յուս քո․ եկեր ՚ի գողգոթայ ուր զխա-
հանին (?) առաջին՝ տարածեցեր զանարատ և
զամենազօր բազուկս քո ՚ի վերայ փրկաւէտ
սուրբ խաչին՝ և պատարագեցար դառնա-
մահարան՝ առ ՚ի հաշտութի հօր և ՚ի քաւութի
մեղուցելոյս։ Արդ՝ ընկալ զխոստովանու-
թիւն իմ հանդերձ երկրպագութ(եամբ) քեզ ՚ի
հաճութի, պարգեւեա զիս ՚ի մեղաց վասն հեշտման (?)
պատուիրանաց որ արարան քո և բարերարու-
թեան որ ամենայնի և ամենայն սրբոց քոց․ զի
դու ես տէր իմ․ և ՚ի քեզ անկայ յար-

դանդէ սբ աւազանին. և ոչ գոյ լինի այլ
ած բաց 'ի քէն, և քեզ փառս մատուցա-
նեմ հանդերձ հարբդ և սբ հոգւովդ
այժմ և միշտ և յաւիտեանս ամէն։

Աղօթք առաջի սբ գողգոթային.

Աստուածագործօր ամենայն տէր բոլորից՝ յոյս մե-
ղաւորաց և փրկութի համայնից. որ յանձն
առեր կամաւ զչարչարանս, և բևեռեցար
'ի խաչափայտին՝ հեղլով զարիւն քո սբ 'ի
փրկութի մեր։ Արդ՝ անկեալ առաջի ամե-
նազօր տէրութեդ՝ երկրպագանեմ սբ տեղ-
ւոյդ խաչելութե, և աղաչեմ բարեխօսութե
մօր քո սուրբ կուսի և ամ սրբոց ներեա՛
ինձ՝ որպէս ներեցեր չարչարողացն զքեզ.
գթա՛ և յիս որպէս գթացար յաջակողմեան
աւազակին, ընդ որում արժանացո՛ և զիս 'ի
դրախտն կենաց՝ քաւելով զմեղս իմ. լո՛ւր
ձայնի աղաչանաց իմոց և պահեա՛ զիս ընդ
հովանեաւ ածային կենսատու նշանի քո.
զի արժանի եղէց գոհութե փառաւորել
զանոխակալ մարդասիրութիւնդ ընդ հօր և
ընդ սբ հոգւոյդ այժմ և միշտ և յաւի-
տեանս ամէն։

## Աղօթք առաջի սրբ պատանատեղւոյն Քնի ·

Անպարագրելի բանդ Հօր և պարգևա-տու ամենայն ողորմութեան, որ խոնարհե-ցար յանձնառու փառացդ · Մեռար մարմնով անմահդ Ած · զի զմահացեալս կեցուս-ցես · պատանեցար որ կտաւովք 'ի յօծանեփայ սրբարար, զի զմերկութիւն ադամայ ծած-կեսցես · և զառ 'ի մեզ ոխս կաշկանդեալս ար-ձակեսցես · և այժմ աղաչեմ զքեզ բարե-խօսութեամբ անարատ ծնողի քո ծածկեա՛ զապականեցեալ հոգի իմ անձնայն եղև շնորհօք քո · մաքրեա՛ 'ի մեղաց մարդասէր գթու-թեամբ քոյ · և պահեա՛ զիս ամենայն ամօթէ զի արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ Հօր ամենակալի և ընդ սբ Հոգւոյդ յաւիտեան այժմ և միշտ և յաւիտեանս Ամէն ·

✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻

## Աղօթք առաջի ածընկալ գերեզմանին Քնի ·

Պաշտամամ զքեզ Թագաւոր անմահ, որ կամաւ յանձն առեր զչարչարանս խաչի և մահու, իջեր 'ի գերեզման թաղելով 'ի սուրբ երկիր · աւերեցեր զդժոխս · լուծեր զերկնչումս մահու · կապեցեր զդերոզն · ա-զատեցեր զգերեալսն · զմեզ խոստման-



ցեր ·

ցեր․ զանկեալն կանգնեցեր․ յարեար ՚ի
մեռելոց, և զմեռեալսն յաւիտենից ընդ-
քեզ յարուցեր․ վն անկանելի առաջի քո
երկիրպագելով ած ընկալ մեզ գերեալս զմա-
նիդ․ հաստատեա ՚ի ճշմարիտ մարդեղութիդ․
օրհնել զխաչելութիդ․ գովել զխոնարհու-
թիդ․ բարեբանել զփառաւորեալ թագաւորդ․
և փառաւորել զկենսատուր յարութիդ։
Արդ՝ բարեխօսութբ անարատ ծնողի քո
սբ ածածնի և ամ սբց լուր ձայնի պաղա-
տանաց իմոց․ և արժանաւորեա զիս ճշմա-
րիտ խոստովանութբ և փրկական սբ մարմ-
նոյ և արեան հաղորդութբն դառնալ առ քեզ։
Ողորմեա որ զամ հաստատեցեալսն և զայնո-
սին որք յանձնեցին ինձ յիշել ՚ի սուրբ
Տեղիս այս․ և ողորմեա նոցա ըստ մեծի
ողորմութեան քում, և արժանի արա զա-
մենեսեան դառնալ յերկրպագութի ամենասբ
Վերբեզմանի քո և վայելել զշնորհս սբ
տեղւոյ, ընդ նոսին շնորհեա և ինձ ա՛ծ
իմ յոյժ ջերմ արտասուս և սէր հոգևոր․
զի արժանապէս փառս և երկրպագութի
մատուցից քեզ ընդ հօր և ընդ
սուրբ հոգւոյն այժմ և միշտ
և յաւիտեանս
ամէն։

Աղօթք ՚ի նյ պարտիզին, ուր երևեցաւ Քս Մարիամու Մագդաղենացւոյն։

Մեծ ես դու Տէր և սքանչելի են գործք քո, որ արարեր զամենայն. յարեար մեծահրաշ զօրութեամբ ոչ խախտելով զկնիք գերեզմանին. երևեցար կանանցն իւղաբերից, զսուգ նց փարատեցեր. զտրտմութիւն մխիթարեցեր. ՚ի պարտիզին կանգնեցեր զառ ՚ի դրախտի զկործանեալն. յայտնելով Մարիամու Մագդաղենացւոյն՝ զարտասուս նր սրբեցեր. առաքեցեր զնա առ ընտրեալսն քո ՚ի գալիլեայ՝ և նոքօք աւետաբանեցեր զյարութիւն. Արդ՝ խնդրեմ ՚ի քէն մարդասէր Տէր, բարեխօսութեամբ ծնողին քո և երջանիկ սրբց առաքելոցդ՝ երևեցո ինձ զերեսս քո. հաստատեա զիս ՚ի քեզ. յարո զիս ՚ի մեռելութենէ մեղաց, և պարգևեա ինձ զուրախութիւն անսպառ, զի արժանաւորեցայց լինել փառաւորիչ ամենասուրբ անուանդ քո, այժմ և միշտ և յաւիտեանս.

Ամէն։

Աղօթք առաջի սեղան յորում կատարեցաւ քն, որ է՚ի նոր
Յովհաննէս եկեղեցւոջ.

Բազմագութ մարդասէր տէր, որ վն ի_
մոյ փրկութե յօժարակամ կրեցեր զանտա_
նելի չարչարանս, կապեցար ՚ի սեան կա_
րողդ երկնից, զի արձակեսցես զիս ՚ի չար
կապանաց բանսարկուին. անխնայ հարուա_
ծոց՝ գանից եւ ապտակաց համբերութե_
ցեր՝ փրկիչդ տիեզերաց, զի զվիրաւորեալս
՚ի հոգի եւ ՚ի մարմին՝ ապաքինեսցես. եւ
արդ՝ խնդրեմ ՚ի քէն թագաւոր անմահ,
կապեա՛լ զիս ՚ի յաւիտենական սէր քո.
զի միայն զքեզ սիրեցից եւ քեզ ծառայե_
ցից, եւ զամենայն անուն քո փառաւորե_
ցից հանապազ. եւ արժանաւոր զիս բարե_
խօսութեամբ անարատ ծնողին եւ սիրելի
աշակերտին քո Յովհաննու՝ երանաւետ
տեսլեանդ. եւ քեզ փառք ընդ հօր
ամենակալի եւ ընդ սբ հոգւոյդ
Ճշմարտի այժմ
եւ միշտ եւ յա_
ւիտեանս
ամէն:

Հօրն երկնաւորի միածին որդի յս՟ քս՟ որ զկնի աւանդելոյ զխորհուրդ կենարար մարմնոյ և արեան քո ՚ի մէջ վերնատանն՝ եկեր ՚ի պարտէզն գեթսամանի՝ ՚ի խնդիր յեղեմական դրախտի կորուսելոյն. աղօթեցեր մարմնով առ հայր վասն իմոյ փրկութեան. յանձն առեր զօրանալ ՚ի հրեշտակաց՝ զօրացուցիչդ երկնաւորաց և երկրաւորաց, կամաւ մատնեցար հրէից՝ նենգութեամբ անօրէն աշակերտին յուդայի՝ զի զմատնեալս մահու և դժոխոց ազատեսցես. Արդ՝ աղաչեմ զքեզ անոխակալ փրկիչ փրկեա՛ զիս ՚ի մեղաց և յամ փորձութեանց, և արժանացո՛ ընդ սրբոց քո ժառանգել զերկնից արքայութիւնդ. զի դու ես տէր կենաց և մեծ ողորմութեան՝ և քեզ փառք և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից ամէն.

Աղօթք առաջի մե. համբարձման տեղւոյն քրի·

Տէր իմ յս քս. որ կատարեցեր զամ
մարմնաւորին տնօրէնութիւնս քո. և զկնի փա-
ռաւոր յարութեդ յաւուրս քառասուն
երևեալդ աշակերտացդ ուսուցեր նց զար-
քայութեն քյ անճառ գիտութին. զորս և հա-
նեալ ՚ի լեառն ձիթենեաց՝ լցեր զանազան
շնորհօք. և տուեր նց առաքելական իշխանութի
քարոզել զաւետարանն ամ արարածոց. որ հա-
նելով զնս առաքեցեր աշակերտել զամ
հեթանոսս, և մկրտել յանուն հօր և որդ-
ւոյ և հոգւոյն սրբոյ, և պատուիրեցեր նոցա
պահել յեղմ, մինչև զգենուլ զզօրու-
թիւնն ՚ի բարձանց: Նա և այժմ ինքնիշ-
խան ամենայն զօրութբդ համբարձար առ
ար յերկինս առ հայր: Արդ և այժմ ան-
կեալ առաջի սրբատեղւոյդ՝ խնդրեմ
՚ի քէն բարձրեալ թագաւոր՝ տէր իմ յս
արժանացո զիս ՚ի միւսանգամ փառաւոր
գալստեանդ՝ գտանիցեմ լինել աջակողմեան
դասուն, և ընդ սրբս քո վերանալ յեր-
կինս, և երգել զերգս օրհնութեն ընդ
երանելեացն (յայտն". 7. 12:) օրհնութի և
փառք. և իմաստութի, և գոհութի, և
պատիւ, զօրութի, և շնորհք ամն այյ մերոյ
յաւիտեանս ամէն:



Ա. ՄՑԱԿԱՆԻԿԵԱՆԻ
Անվան
Публичная Библиотека

Աղօթք առաջի ամենօրհնեալ տիրամայր եւ Աստուածածնին գերեզմանին.

Ով մայր ողորմութեան եւ ծնող այ բանին անարատ կոյս սուրբ ածածին. գթա՛ յիս ի մեղաւոր ծառայս քո, զի առ քեզ ապաւինիմ, որ յոյս ես մեղաւորաց, ապաւէն կորուսելոց, կանգնիչ գլորելոց, եւ բարեխօս վասն ազգի մարդկան: Արդ՝ անկանիմ առաջի քո համբուրելով զսրբո-բէտապահ դամբարանն ածընկալ մարմնոյդ. եւ աղաչեմ զքեզ՝ ազատեա՛ զիս յորոգայթէ մեղաց. եւ կանգնեա՛ զկործանեալս ի խորս չարեաց. եւ մի՛ մերժեր զիս ի քոյ բազմախնամ գթուէդ. զի գին եմ սբ արեան միածնի քոյ եւ այ իմոյ. որում երկրպագութի փառք եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս

Ամէն.

ՎԵՐՋ.